1) «ԹԱՍԿ» ՍՊԸ-ի հետ (<ՎՀՀ՝ 01237925) 2012 թվականի հունիսի 20-ին կնքված՝ N 12-17 ապրանքի մատակարարման պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սույն պայմանագրի N1 հավելվածում նշված ապրանքների հանձնում, տեղադրում ու կարգաբերում՝ 940000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ԶՈՒԼԻԱՆՆԱ» ՍՊԸ-ի հետ (<ՎՀՀ՝ 04700102) 2012 թվականի հուլիսի 9-ին կնքված՝ N 010/2012 մատակարարման պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է

սույն պայմանագրի N1 հավելվածում նշված ապրանքների մատակարարումը՝ 4709100 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**27 հուլիսի 2012 թվականի N Մ- 613 - Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 28-Ի N Մ-496-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՈՒ ԿԻՑ
ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՈՒ
ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հուլիսի 17-ի N 3/3.8-1/9315-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հուլիսի 14-ի N ԱԱ/3-4/7346-12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 28-ի «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Հին Վեհարանի շենքի վերանորոգում» ծրագրի մասին» N Մ-496-Ա որոշման մեջ ու կից ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման 1-ին ու կից ծրագրի 6-րդ կետերում «477462090 դրամ» բառերը փոխարինել «498679090 դրամ» բառերով.

2) որոշման կից ծրագրի 6-րդ կետը լրացնել հետևյալ նոր պարբերությամբ.

«Նախատեսվում է Հին վեհարանի դռների, պատուհանների և պատուհանագոգերի տեղադրում՝ 21217000 դրամ գումարով:».


3) որոշման կից ծրագրի 9-րդ և 10-րդ կետերը լրացնել հետևյալ նոր պարբերությամբ.

«Նախատեսվում է Հին վեհարանի դռների, պատուհանների և պատուհանագոգերի տեղադրում՝ 21217000 դրամ գումարով՝ առանց ԱԱՀ-ի:»:

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից (ՀՎՀՀ՝ 04703401) կնքված՝ ստորև նշված պայմանագով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Կարիտաս» ՍՊԸ-ի հետ (ՀՀ, քաղ. Երևան, Աշտարակի խճուղի 2Ա, ՀՎՀՀ՝ 03301484) 2012 թվականի մայիսի 2-ին կնքված՝ եռակողմ N 06Ծ/012 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հին Վեհարանի դռների, պատուհանների և պատուհանագոգերի պատրաստում ու տեղադրում՝ 21217000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 հուլիսի 2012 թվականի N Մ-
քաղ. երևան **614**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ԱՊՐԻԼԻ 30-Ի N Մ-282-Ա ԵՎ ՄԱՅԻՍԻ 3-Ի N Մ-228-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ
ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(«Առողջապահական համակարգի հզորացում», «Հայաս-
տանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ
պայքարի ազգային ծրագրին աջակցություն»)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջա-
պահության նախարարության 2012 թվականի հունիսի 28-ի N ՍԲ/15-1/6390-12 գրությունը և
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հուլիսի 4-ի
N 3/3.8-1/8933-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետա-
կան եկամուտների կոմիտեի 2012 թվականի հուլիսի 4-ի N ԱԱ/3-4/6989-12 եզրակացու-
թյունները, որոշում է.*


1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարա-
րության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի
միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով իրականացվող գործարքն անմիջա-
կանորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի «Առողջապահա-
կան համակարգի հզորացում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-282-Ա (Հայաստանի
Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնա-
ժողովի 2012 թվականի հունիսի 29-ի N Մ-511-Ա խմբագրությամբ) և 2010 թվականի մայիսի
3-ի «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին
աջակցություն» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-228-Ա (Հայաստանի Հանրա-
պետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի
2012 թվականի հունիսի 29-ի N Մ-512-Ա խմբագրությամբ) որոշումներով հաստատված
ծրագրերի իրականացման հետ և դրանց համար ունի զգալի նշանակություն՝

2

«Տրանսիմպեքս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00051849) 2012 թվականի մարտի 24-ին
կնքված N ԲԸԱՀ - ԾՁԲ-12/2 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սուր-
հանդակային ծառայությունների մատուցում՝ 400000 դրամի չափով՝ առանց ավելացված
արժեքի հարկի (200000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի N Մ-282-Ա
որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում, 200000 դրամի չափով՝ առանց ավե-
լացված արժեքի հարկի N Մ-228-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և
Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների
կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ - ՄԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**27 հուլիսի 2012 թվականի N Մ- 615 - Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 29-Ի N Մ-467-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
(Հայկական կարմիր խաչի ընկերություն)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հուլիսի 17-ի N 3/3.8-1/9309-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հուլիսի 14-ի N ԱԱ/3-4/7336-12 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ 2012 թվականի հունիսի 29-ի «Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Կառուցենք անվտանգ տեղական համայնքներ հարավային Կովկասում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-467-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Էդգար Փարթևերս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00104451) 2012 թվականի հուլիսի 10-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Կառուցենք անվտանգ տեղական համայնքներ հարավային Կովկասում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում պաստառների, ուսումնական բուկլետների, ձեռնարկների ու թերթիկների տպագրում՝ 37880000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Նյու Հորիզոն Գրուպ, Ինկ» հայաստանյան մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 00930386) 2012 թվականի հունիսի 29-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Կառուցենք անվտանգ տեղական համայնքներ

հարավային Կովկասում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում անցկացվող հնգօրյա տարածաշրջանային սեմինարի մասնակիցների գիշերակացի, սննդի, սուրճի ընդմիջման և դահլիճի ապահովում՝ 2449500 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «ՖԼԵՇ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01808789) 2012 թվականի հուլիսի 9-ին կնքված՝ N 117/12 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 3800 լիտր «Ռեգուլյար» տեսակի բենզինի ձեռքբերում՝ 1634000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԻՇ



Ա.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Շ ՈՒ Մ
27 հուլիսի 2012 թվականի **N Մ - 616** Ա
քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱԿԱԿՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «Վ. Ա. ՖԱՆԱՐՋՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՈՒՈՒԹՅԱՆ ԲԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ
ՄԱՍԻՆ**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հուլիսի 23-ի N 3/3.8-2/9607-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի հուլիսի 19-ի N ԴԴ/22/7014-12, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության 2012 թվականի հուլիսի 20-ի N 1/02.3/2417-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի 2012 թվականի հուլիսի 19-ի N 02-Մ-56 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հուլիսի 18-ի N ԱԱ/3-6/7540-12 եզրակացությունները, **ո ր շ ու մ է.**

1. Բարեգործական որակել Ատոմային էներգիայի միջազգային գործակալության հետ տեխնիկական համագործակցության ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ստացված բեռի (արհեստական ռադիոակտիվ իզոտոպ՝ տեխնեցիումի գեներատոր (Tc99m), 1 տեղ, 17 կգ ընդհանուր քաշով, 858 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 315.3 եվրո, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:


2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱԾ



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

27 հուլիսի 2012 թվականի N Մ-617-Ա
քաղ. երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 8-Ի N Մ-451-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱ-
ԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Տուբերկույոզի դեմ պայքարի ազգային
գրասենյակ» ՊՈԱԿ) (2)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանս-
ների նախարարության 2012 թվականի հուլիսի 21-ի N 3/3.8-1/9575-12, Հայաստանի Հանրա-
պետության առողջապահության նախարարության 2012 թվականի հուլիսի 26-ի N ԴԴ/02.2/
7320-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկա-
մուտների կոմիտեի 2012 թվականի հուլիսի 23-ի N ԱԱ/3-4/7790-12 եզրակացությունները,
ո ղ ը ղ ու մ է.


1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարու-
թյան և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկույոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի
միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով, Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարության «Տուբերկույոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ»
ՊՈԱԿ-ի (ՀՎՀՀ՝ 01243384) կողմից իրականացվող գործարքն անմիջականորեն կապված է
Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովի 2012 թվականի հունիսի 8-ի «Հայաստանի Հանրապետության առող-
ջապահության նախարարության «Տուբերկույոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ»
ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող «Տուբերկույոզի դեմ պայքարի ազգային ծրագրի աջակ-
ցություն» ենթադրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-451-Ա որոշմամբ հաստատված
ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Շիրակ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02504277) 2012 թվականի հուլիսի 17-ին կնքված՝
N ՏԱԳ-ՊԸԾԶԲ-12/01 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հյուրա-
նոցային ծառայությունների մատուցում՝ 2700000 դրամի չափով՝ առանց ավելացված արժե-
քի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաս-
տանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Մ Ա Մ

27 հուլիսի 2012 թվականի N Մ- 618 -Ա
քաղ. երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՅԻՍԻ 3-Ի N Մ- 228-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿ-
ՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌԻ ՄԱՍԻՆ («Հայաստանի Հանրապետություն-
նում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն»
դրամաշնորհային ծրագիր) (2)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանս-
ների նախարարության 2012 թվականի հուլիսի 25-ի N 3/3.8-2/7916-12, Հայաստանի Հան-
րապետության առողջապահության նախարարության 2012 թվականի հուլիսի 26-ի N ՍԲ/ 22/
7317-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկա-
մուտների կոմիտեի 2012 թվականի հուլիսի 21-ի N ԱԱ/3-6/7772-12 եզրակացությունները,
որոշում է.


1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարա-
րության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի
միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով ձեռք բերված «Հայաստանի Հան-
րապետության առողջապահության նախարարության մարդասիրական օգնության հանրա-
պետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (ՊՈԱԿ) հասցեով
ստացված բեռը (թեստ հավաքածուներ՝ Murex HIV AG/AB combination, ELIZA Kit 96 test)-
300 տուփ, 2 տեղ, 208 կգ քաշով, 27750 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը
կազմել են 280,8 եվրո, «Զվարթնոց» մտ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվակա-
նի մայիսի 3-ի «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային
ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-228-Ա որոշմամբ հաս-
տատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաս-
տանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 հուլիսի 2012 թվականի N Մ- 619-Ա
քաղ. երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՅԻՍԻ 3-Ի N Մ- 228-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿ-
ՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌԻ ՄԱՍԻՆ («Հայաստանի Հանրապետություն-
նում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն»
դրամաշնորհային ծրագիր) (1)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանս-
ների նախարարության 2012 թվականի հուլիսի 26-ի N 3/3.8-2/9747-12, Հայաստանի Հան-
րապետության առողջապահության նախարարության 2012 թվականի հուլիսի 24-ի N ԴԴ/22/
7262-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկա-
մուտների կոմիտեի 2012 թվականի հուլիսի հուլիսի 21-ի N ԱԱ/3-6/7771-12 եզրակացություն-
ները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարա-
րության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլխավոր հիմնադրամի
միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով ձեռք բերված «Հայաստանի Հան-
րապետության առողջապահության նախարարության մարդասիրական օգնության հանրա-
պետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (ՊՈԱԿ) հասցեով
ստացված բեռը (դեղորայք՝ Զիդովուդին 300 մգ, N 60 – 153 տուփ, 1 տեղ, 9 կգ քաշով,
1009.8 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 3303 հնդկական ռուփի,
«Զվարթնոց» մտ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարե-
գործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 3-ի «Հայաս-
տանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցու-
թյուն» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-228-Ա որոշմամբ հաստատված ծրագրի
շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաս-
տանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Շ ՈՒ Մ

31 հուլիսի 2012 թվականի N Մ- 620 - Ա

(Որոշումն ընդունվել է 2012 թվականի հուլիսի 27-ի նիստին)

քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ
29-Ի N Մ-518-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԵՎ ԿԻՑ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՈՒ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
(«ՎՈՐՈՂ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հուլիսի 31-ի N 3/3.8-1/8109-12 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հուլիսի 30 -ի N ԱԱ/3-4/9967-12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է:**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունիսի 29-ի «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Անգեղակոթ համայնքի խմելու ջրի ավազանի և Շաքի համայնքի խմելու ջրի ջրագծի վերանորոգում» ծրագրի մասին» N Մ-518-Ա որոշման 1-ին և որոշմամբ հաստատված ծրագրի 6-րդ կետերում «3584448 դրամ» բառերը փոխարինել «2530111 դրամ» բառերով.

2. Սահմանել, որ «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված


գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Արմ Պլաստ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02572315) 2012 թվականի հուլիսի 13-ին կնքված՝ N WVA/SIS ADP/CM-12/001 LOT2 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինանյութի մատակարարում՝ 2068500 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Արաման Սթոուն Սթայլ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 08207707) 2012 թվականի հուլիսի 13-ին կնքված՝ N WVA/SIS ADP/CM-12/002 LOT1-03 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինանյութերի մատակարարում՝ 461611 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՄԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 հուլիսի 2012 թվականի N Մ- 621 - Ա
(Որոշումն ընդունվել է 2012 թվականի հուլիսի 27-ի նիստին)
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ
29-Ի N Մ-519-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԵՎ ԿԻՑ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՈՒ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՎՈՐԼՂ
ՎԻԺ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒ-
ԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարարության 2012 թվականի հուլիսի 30-ի N 3/3.8-1/9968-12 և Հայաստանի
Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012
թվականի հուլիսի 30-ի N ԱԱ/3-4/8088-12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունիսի 29-ի «Վորլդ վիժն ինթերնեյշնլ»
միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից
իրականացվող «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի չորս համայնքների
մշակույթի տան վերանորոգում» ծրագրի մասին» N Մ-519-Ա որոշման 1-ին և որոշմամբ
հաստատված ծրագրի 6-րդ կետերում «7025737 դրամ» բառերը փոխարինել «5288391 դրամ»
բառերով:


2. Սահմանել, որ «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական
կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. երևան, Ռոմանոս
Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն

անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված որոշմամբ հաստատված
ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արաման Սթոուն Սթայլ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 08207707) 2012 թվականի հուլիսի 13-ին
կնքված՝ N WVA/SIS ADP/CM-12/002 LOT1-01 պայմանագրում նշված գործարքը, որով նախա-
տեսվում է շինանյութերի մատակարարում՝ 5288319 դրամի չափով, առանց ավելացված
արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 հուլիսի 2012 թվականի N Մ- 622 - Ա

(Որոշումն ընդունվել է 2012 թվականի հուլիսի 27-ի նիստին)

քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ
29-Ի N Մ-520-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԵՎ ԿԻՑ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՈՒ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՎՈՐԼԴ
ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԸ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒ
ԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱԾՅՈՒՂ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հուլիսի 30-ի N 3/3.8-1/9969-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հուլիսի 30-ի N ԱԱ/3-4/8059-12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունիսի 29-ի «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Դարբաս համայնքի աղբավայրերի ցանկապատում» ծրագրի մասին» N Մ-520-Ա որոշման 1-ին և որոշմամբ հաստատված ծրագրի 6-րդ կետերում «983955 դրամ» բառերը փոխարինել «936136 դրամ» բառերով:

1. Սահմանել, որ «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արաման Սթոուն Սթայլ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 08207707) 2012 թվականի հուլիսի 13-ին կնքված՝ N WVA/SIS ADP/CM-12/002 LOT1-02 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինանյութերի մատակարարում՝ 939136 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԸ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**27 հուլիսի 2012 թվականի N Մ-623Ա
քաղ. երևան**


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N Մ-029-Ա ՈՐՈՇՄԱՆԸ ԿԻՑ ԾՐԱԳՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(«Արմենակ և Աննա Թադէոսյանների անվամբ բուժարան» ԲՀ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով «Արմենակ և Աննա Թադէոսյանների
անվամբ բուժարան» բարեգործական հիմնադրամի 2012 թվականի հուլիսի 19-ի N 1085
գրությունը, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունվարի 27-ի «Արմենակ և Աննա
Թադէոսյանների անվամբ բուժարան» բարեգործական հիմնադրամի կողմից
իրականացվող՝ «Կոշ գյուղում պոլիկլինիկայի կառուցում» ծրագրի մասին» N Մ-029-Ա
որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ կետում «31 դեկտեմբերի 2011» բառերը փոխարինել
«30 դեկտեմբերի 2012 » բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-
րարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**27 հուլիսի 2012 թվականի N Մ- 624
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 20-Ի N Մ-442-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**


(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հունիսի 29-ի N 3/3.8-1/8644-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամույների կոմիտեի 2012 թվականի հուլիսի 3-ի N ԱԱ/3-4/6943-12 եզրակացությունները, որոշում է.

1. Սահմանել, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կոդմից (ՀՎՀՀ՝ 00032803) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 20-ի «Հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կոդմից իրականացվող «Բարեկեցիկ պայմաններ» ծրագրի մասին» N Մ-442-Ա (2010 թվականի ապրիլի 30-ի N Մ-280-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Վազեն Գրուպ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00105041) 2012 թվականի հունիսի 26-ին կնքված N 6 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գազաֆիկացման աշխատանքների իրականացում՝ 6091700 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամույների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
27 հուլիսի 2012 թվականի N Մ-625Ա
քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012
ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 23-Ի N Մ-228-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ
ԵՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**
(«Երուսաղեմի բժշկական Սուրբ Ղազարի օրդենը Հայաստանում»)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հուլիսի 26-ի N 3/3.8-2/9772-12, Հայաստանի Հանրապետության աշխարհային և սոցիալական հարցերի նախարարության 2012 թվականի հուլիսի 25-ի N ՖՔ/ԱՆՄ-5/5132-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հուլիսի 24-ի N ԱԱ/3-6/7879-12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Սահմանել, որ Գերմանիայից «Երուսաղեմի Սուրբ Ղազար Օրդենը Հայաստանում» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռի (1 բեռնարկը, 830 տեղ, 11480 կգ ընդհանուր քաշով, 20078 եվրո արժողությամբ, իսկ փոխադրման և այլ ծախսերը կազմում են 5035 եվրո, բեռի բաշխման ցանկը կցվում է, «Գուգարք» ՄՏ) ներմուծվում է «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի մարտի 23-ի «Երուսաղեմի Սուրբ Ղազար Օրդենը Հայաստանում» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն խոցելի խմբերին» N Մ-228-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում, (բեռի ցանկը կցվում է):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱԾ

Ս. ՏԵՐ-ՄԻՄՈՆՅԱՆ

"GAIN" կողմից Երուսաղեմի բժշկական Սուրբ Ղազարի Օրդենը Հայաստանում" ԲՀ
հասցեով ուղարկված բեռների նախնական բաշխման

ՑԱՆԿ

N	Կազմակերպության անվանում	Մարքավորման անվանում	Քանակ	Արժեքը եվրո
1	Սոցիալապես անապահով անձիք (բաշխումը Մայիտակի քաղաքապետարանի հետ համաձայնեցված ցուցակներով)	Օգտագործված հագուստ	190 տուփ	1298.8
		Հենակ	2 հատ	320
2	Սոցիալապես անապահով անձիք (բաշխումը Տավուշի մարզպետարանի հետ համաձայնեցված ցուցակներով)	Օգտագործված հագուստ	53 տուփ	357.6
3	Մայիտակի թիվ 1 հատուկ դպրոց	վացող հեղուկ պերսիլ	10 հատ	100
		մետաղյա աթոռ կտորածածկ	1 հատ	22.4
		փայտից գրասեղաններ տարբեր չափերի	6 հատ	728
		օգտ.կտորածածկ կահույք	10 հատ	1033.3
		Դպրոցական պայուսակներ	75 հատ	422.7
		դպրոցական կավիճ	32.7 կգ	39.6
		սեղանի մանկական գրչատուփ	68 կգ	101.1
		գրչամաններ տեքստիլ նյութից	75 հատ	422.7
		Տետրեր	94 կգ	139.7
		դպրոցական քանոն	75 հատ	1.7
		Օգտագործված հագուստ	656 կգ	547
4	Մայիտակի թիվ 1 մանկապարտեզ	վացող հեղուկ պերսիլ	6 հատ	60
5	Մայիտակի թիվ 2 մանկապարտեզ	վացող հեղուկ պերսիլ	4 հատ	40
6	"GAIN" Հայաստան	Օգտագործված հագուստ	214 տուփ	1465
		Կարի մեքենա	1 հատ	80
		Կիթառ	1 հատ	140
		վացող հեղուկ պերսիլ	20 հատ	200
		մանկակայ մետաղյա	30կգ	104.11
		Դպրոցական պայուսակներ	25 հատ	140.9
		մանկական պլաստիլին	28կգ	33.88
		Հեծանիվ	2 հատ	300

✓


✓

		Ֆուտբոլի կաշվե գնդակ	50 հատ	235
		Պոմպ ֆուտբոլի գնդակի համար	60 հատ	130
		Ֆուտբոլի դարպաս փոքր	1 հատ	13.35
		փայտից մանկական սեղան՝ աթոռով	1 հատ	60
		սպունգից ներքնակներ	1	56.7
		Դսպ-ից գրասեղաններ	4 հատ	485.3
		պլաստմասե սեղան՝ ծղոտանման պատվածքով	2 հատ	126.3
		լրագրասեղան 2	2 հատ	450
		մետաղյա աթոռ դերմանտինածածկ	7 հատ	157.3
			5 հատ	516.8
		փափուկ կահույքի կոմպլեկտ(2 տեղ+3տեղ)		
		Տետրեր	18.8 կգ	27.95
		Մատիտ	1 արկղ	11.15
		դպրոցական կալիճ	16.3 կգ	19.7
		գրչամաններ տեքստիլ նյութից	25 հատ	140.9
		դպրոցական քանոն	25 հատ	0.55
		գրիչ մետաղյա իրանով	25 հատ	1.1
		ոետին գրասենյակային	1.1 կգ	1.7
		գրիչ հասարակ	25 հատ	0.3
		Ֆլումաստեր	525 հատ	7.05
		փայտից խաղեր՝ կոնստրուկտոր	11 կգ	13.64
		պլաստմասե խաղեր՝ կոնստրուկտոր	4 կգ	4.84
		սրիչ մատիտների համար	25 հատ	0.4
		Թենիսի սեղան անիվներով	1 հատ	320
7	Սպիտակի "Ռեգեպտոր" առողջության կենտրոն	Հիվանդանոցային մահճակալ	2 հատ	480
		սպունգից ներքնակներ	2 հատ	113.3
		Մոնոգրաֆ "Toshiba SONOLAYER SAL-77B"	1 հատ	1100
8	"Արհեստների տուն" ՀԿ	Կարի մեքենա	2 հատ	160
9	Սպիտակի YMCA	Տետրեր	37.6 կգ	55.9
		Ֆուտբոլի կաշվե գնդակ	50 հատ	235
		Պոմպ ֆուտբոլի գնդակի համար	120 հատ	260
		Ֆլումաստեր	1575 հատ	21.2
		սրիչ մատիտների համար	75 հատ	1.1
		լվացող հեղուկ պերսիլ	8 հատ	80
10	"Սպիտակ ֆերմեր" ՀԿ			
		Տետրեր	37.6 կգ	55.9
		Մատիտ	1 արկղ	11.15
		գրիչ հասարակ	175 հատ	1.95
		ոետիններ գրասենյակային	3.4 կգ	5
		գրիչ մետաղյա իրանով	75 հատ	3.3
		օգտ.կտորածածկ կահույք	9 հատ	930
		լրագրասեղան ապակե երեսամասով	1 հատ	63.18

		գրասենյակային աթոռներ մետաղյա իրանով՝ հովովակներով	3 հատ	107.82
		փայտից գրասեղաններ տարբեր չափերի	5 հատ	606.6
		Դսպ-ից ճաշասենյակի կահույքի կոմպլեկտ օգտագործած	1 կոմպլեկտ	1413.5
		փայտից փոքր պահարան	3 հատ	107.82
11	Պողոսյան Մանյակ	Դսպ-ից ննջարանային կահույքի կոմպլեկտ, երկհարկանի մահճակալ	2 հատ	1493.16
12	Մաթոսյան Մարուսյա	Դսպ-ից ճաշասենյակի կահույքի կոմպլեկտ օգտագործած	1 կոմպլեկտ	1413.6
13	Մուքիսյան Կարեն	Հիվանդանոցային մահճակալ	1 հատ	240
14	Գրիգորյան Աշոտ	Հիվանդանոցային մահճակալ	1 հատ	240

Ընդամենը

20078





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 հուլիսի 2012 թվականի **N Մ- 626** - Ա
քաղ. երևան

**«ԱՅԲ» ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՅԲԼԱՐ-
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԼԱՌՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ-ՎԱՂԱՐՇԱՊԱՏ»
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հուլիսի 26-ի N 3/3.8-2/9774-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի հուլիսի 27-ի N 02/4555-12, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2012 թվականի հուլիսի 25-ի N 03/07-1/8048-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հուլիսի 24-ի N ԱԱ/3-4/7882-12 և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի 2012 թվականի հուլիսի 25-ի N 01/08.1/2473-12 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 843020 դրամ արժողությամբ «ԱյբԼար-ուսումնական առարկայական լաբորատորիաներ-Վաղարշապատ» ծրագիրը (կցվում է):


2. «Այբ» կրթական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի

համակարգման հանձնաժողով ներկայացնել ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան և Վաղարշապատի քաղաքապետարան:



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



«ԱյբԼաբ-ուսումնական առարկայական լաբորատորիաներ-Վաղարշապատ»
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրով նախատեսվում է Վաղարշապատի և Արմավիրի անվ. # 4 հիմնական դպրոցում «Այբ» կրթական Իմաստդրամի և դպրոցի համագործակցության արդյունքում ստեղծված քիմիայի առարկայական ուսումնական լաբորատորիայի գինում փորձարարական սեղանների համար անհրաժեշտ քիմիական ծորակներով և վազարաններով: Դպրոցում հիմնված քիմիայի, ֆիզիկայի և կենսաբանության առարկայական լաբորատորիաներից իրենց ուսումնառության ընթացքում լիարժեք օգտվում են շուրջ 400 աշակերտներ: Ծրագրի անհրաժեշտությունը Ծրագրի նպատակն է ՀՀ հանրակրթական համակարգի զարգացմանն աջակցել՝ օրինակելի առարկայական լաբորատորիաների հիմնադրման և դրանց թվի ավելացման միջոցով: Այս լաբերի հիմնադրումն ու տարածումն ուղղված են տեխնոլոգիապես հագեցած ժամանակակից առարկայական լաբորատորիաների միջոցով հայաստանյան դպրոցներում կրթությունը մրցունակ դարձնելուն: «Այբ»-ը Հայաստանում միակ մասնագիտացված կազմակերպությունն է, որն ունի դպրոցական ուսումնական լաբորատորիաների՝ որպես ամբողջական համալիրի նախագծման և հիմնադրման փորձ: Այս ուսումնական լաբերը հնարավորություն են տալիս իրականացնել տարբեր առարկաների ուսումնական պլանով նախատեսված փորձերն ու աշխատանքները: Հանդիսանալով ոչ առևտրային կազմակերպություն՝ «Այբ»-ն իր գործունեությունն ու զարգացումն ապահովում է բացառապես բարերարների նվիրատվությունների հաշվին:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ծրագրի բարեգործական որակման նպատակը Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից օգտվելն է, համաձայն ՀՀ կառավարության 2003թ. հունվարի 16-ի N66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 3-րդ կետի բ) ենթակետի դրույթների: Մասնավորապես՝ ծրագրի շրջանակներում Հիմնադրամի սեփական միջոցների և հանգանակությունների հաշվին արտոնություններից օգտվելով և ՀՀ-ի տարածքում ձեռքբերվող տպագիր և էլեկտրոնային ուսումնական նյութերի, լաբորատոր և ուսումնական սարքավորումների և պարագաների, կահույքի և տեխնիկայի ազատումը մաքսային պարտադիր վճարումներից և ԱԱՀ-ից:
3.	Բարեգործը	«Այբ» կրթական Իմաստդրամին նվիրաբերված միջոցների հաշվին: «Այբ» կրթական Իմաստդրամը հանդես է գալիս իր բազմաթիվ նվիրատուների անունից և իրականացնում է ծրագիրը նրանց

	հանգանակված միջոցների հաշվին: Նվիրատուների ցանկը բավական երկար է, ուստի այն ամբողջությամբ ներկայացնել ծրագրում հնարավոր չէ (տե՛ս Հիմնադրամի հիմնական նվիրատուների ցանկը ստորև). <table border="1"> <tr><td>Անահիտ</td><td>Ադամյան</td><td>Ռուսաստան</td></tr> <tr><td>Արամ</td><td>Փախչանյան</td><td>Ռուսաստան</td></tr> <tr><td>Արմեն</td><td>Կազարով</td><td>Ռուսաստան</td></tr> <tr><td>Արտակ</td><td>Հովհաննիսյան</td><td>Ռուսաստան</td></tr> <tr><td>Արտաշես</td><td>Շիրիկյան</td><td>Ռուսաստան</td></tr> <tr><td>Արթուր</td><td>Բերդ</td><td>ԱՄՆ</td></tr> <tr><td>Աշոտ</td><td>Ասլանյան</td><td>Հայաստան/Ռուսաստան</td></tr> <tr><td>Աշոտ</td><td>Թումայան</td><td>Ռուսաստան</td></tr> <tr><td>Ավետիք</td><td>Չալաբյան</td><td>Ռուսաստան</td></tr> <tr><td>Դավիթ</td><td>Փախչանյան</td><td>Ռուսաստան</td></tr> <tr><td>Դավիթ</td><td>Յան</td><td>Ռուսաստան</td></tr> <tr><td>Կարեն</td><td>Մուսաբյան</td><td>ԱՄՆ</td></tr> <tr><td>Լևոն</td><td>Կազարյան</td><td>ԱՄՆ</td></tr> <tr><td>Մանուկ</td><td>Հերզնյան</td><td>Հայաստան</td></tr> <tr><td>Սամվել</td><td>Դովլաթյան</td><td>Հայաստան</td></tr> <tr><td>Վահե</td><td>Ամիրբեկյան</td><td>ԱՄՆ</td></tr> </table>	Անահիտ	Ադամյան	Ռուսաստան	Արամ	Փախչանյան	Ռուսաստան	Արմեն	Կազարով	Ռուսաստան	Արտակ	Հովհաննիսյան	Ռուսաստան	Արտաշես	Շիրիկյան	Ռուսաստան	Արթուր	Բերդ	ԱՄՆ	Աշոտ	Ասլանյան	Հայաստան/Ռուսաստան	Աշոտ	Թումայան	Ռուսաստան	Ավետիք	Չալաբյան	Ռուսաստան	Դավիթ	Փախչանյան	Ռուսաստան	Դավիթ	Յան	Ռուսաստան	Կարեն	Մուսաբյան	ԱՄՆ	Լևոն	Կազարյան	ԱՄՆ	Մանուկ	Հերզնյան	Հայաստան	Սամվել	Դովլաթյան	Հայաստան	Վահե	Ամիրբեկյան	ԱՄՆ	
Անահիտ	Ադամյան	Ռուսաստան																																																
Արամ	Փախչանյան	Ռուսաստան																																																
Արմեն	Կազարով	Ռուսաստան																																																
Արտակ	Հովհաննիսյան	Ռուսաստան																																																
Արտաշես	Շիրիկյան	Ռուսաստան																																																
Արթուր	Բերդ	ԱՄՆ																																																
Աշոտ	Ասլանյան	Հայաստան/Ռուսաստան																																																
Աշոտ	Թումայան	Ռուսաստան																																																
Ավետիք	Չալաբյան	Ռուսաստան																																																
Դավիթ	Փախչանյան	Ռուսաստան																																																
Դավիթ	Յան	Ռուսաստան																																																
Կարեն	Մուսաբյան	ԱՄՆ																																																
Լևոն	Կազարյան	ԱՄՆ																																																
Մանուկ	Հերզնյան	Հայաստան																																																
Սամվել	Դովլաթյան	Հայաստան																																																
Վահե	Ամիրբեկյան	ԱՄՆ																																																
4.	Ծրագիրը կատարողը	Ծրագիրն իրականացնում է «Այբ» կրթական Իմաստդրամը, որի տվյալներն են՝ - ՀՀՀՀ 01558429 - Հասցեն՝ Երևան 0009, Կորյունի 19ա - Հաշվարկային հաշիվ՝ Ինքնկրթանկ ՓԲԸ, Կորյուն մասնաճյուղ, 2050442011971001 - Գործադիր տնօրեն՝ Դավիթ Սահակյան: «Այբ» կրթական Իմաստդրամի իրականացրած «ԱյբԼաբ» ծրագրի շրջանակներում Երևանի																																																

		Ֆիզմաթ դպրոցի ֆիզիկայի լաբորատորիայի համար սարքավորումների և նյութերի ներմուծման ծրագիրը որակվել է բարեգործական՝ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2007թ. դեկտեմբերի 14-ի N Մ-851-Ա որոշմամբ: Իսկ «Այբ ավագ դպրոց» ծրագիրը որակվել է որպես բարեգործական՝ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011թ. նոյեմբերի 25-ի N Մ-1063-Ա որոշմամբ:								
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Ծրագիրն իրականացվելու է Վաղարշապատի Խ. Աբովյանի անվ. # 4 հիմնական դպրոցում՝ «Այբ» կրթական հիմնադրամի և դպրոցի համատեղ ջանքերով հիմնված քիմիայի առարկայական ուսումնական լաբորատորիայում: Ծրագրի բնագավառը՝ հանրակրթություն:								
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 843.020 դրամ, որը ներառում է ծրականների և վճարարանների արտերկրից ձեռքբերման և ՀՀ տեղափոխման ծախսերը:								
7.	Բարեգործություն ստացողը	Բարեգործություն ստացողները Վաղարշապատի Խ. Աբովյանի անվ. # 4 հիմնական դպրոցի սաներն են:								
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագրի սկիզբը՝ 2012թ. հուլիսի 23, ավարտը՝ 2012թ. սեպտեմբերի 23, տևողությունը՝ 2 ամիս:								
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագիրը նախատեսում է Վաղարշապատի Խ. Աբովյանի անվ. # 4 հիմնական դպրոցի քիմիայի առարկայական ուսումնական լաբորատորիայի համար ձեռք բերել փորձարարական սեղանների համար անհրաժեշտ քիմիական ծրականներ և վճարարաններ: Աշխատանքները կավարտվեն 2012թ. սեպտեմբերին: Միջոցառումների ծախսերը կկազմեն 843.020 դրամ՝ ներառյալ վճարարանների և ծրականների ձեռքբերումն արտերկրից և դրանց տեղափոխումը ՀՀ:								
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ծրագրի շրջանակներում նախատեսվում է հետևյալ ապրանքների ձեռքբերում. <table><tr><th colspan="2">ՆԵՐՄՈՒԾՈՒՄ</th></tr><tr><td>Այդ թվում՝</td><td></td></tr><tr><td>Քիմիական ծրականներ, 13 հատ</td><td>384.804</td></tr><tr><td>Քիմիական վճարարաններ, 13 հատ</td><td>458.216</td></tr></table>	ՆԵՐՄՈՒԾՈՒՄ		Այդ թվում՝		Քիմիական ծրականներ, 13 հատ	384.804	Քիմիական վճարարաններ, 13 հատ	458.216
ՆԵՐՄՈՒԾՈՒՄ										
Այդ թվում՝										
Քիմիական ծրականներ, 13 հատ	384.804									
Քիմիական վճարարաններ, 13 հատ	458.216									
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպման ծախսերը	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպման ծախսեր չեն նախատեսվում:								

12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագրի շրջանակներում նախատեսված է համագործակցել ՀՀ կրթության և գիտության նախարարության, Էջմիածնի բաղաբապետարանի, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	ա) ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով: բ) «Այբ»-ը կրթական հիմնադրամ է՝ ոչ առևտրային կազմակերպություն, և իր գործունեությամբ հաշվետու է Հոգաբարձուների խորհրդին ու վերահսկվում է նրա կողմից: «Այբ» կրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամներն են. 1. Տեր Մեսրոպ քին Արամյան, նախագահ (Հայաստան) 2. Արամ Փախչանյան (Ռուսաստան) 3. Դավիթ Յան (Ռուսաստան) 4. Կարեն Մուսաեյան (ԱՄՆ) 5. Կարո Սարգսյան (Ռուսաստան) 6. Դավիթ Փախչանյան (Ռուսաստան): Ծրագրի ավարտից հետո ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին կտրվի ծրագրի կատարման վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն:





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 հուլիսի 2012 թվականի N Մ- 627 - Ա

(Որոշումն ընդունվել է 2012 թվականի հուլիսի 27-ի նիստին)

քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 29-Ի N Մ-130-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ
ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՎՈՐԼԴ ՎԻՖՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հուլիսի 30-ի N 3/3.8-1/9971-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հուլիսի 30-ի N ԱԱ/3-4/8055-12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Վորլդ ՎիՖՆ Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 29-ի «Վորլդ ՎիՖՆ Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Կապեր եկեղեցու և կառավարության հետ» ծրագրի մասին» N Մ-130-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ծաղկաձորի ստեղծագործական տուն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03003504) 2012 թվականի հուլիսի 12-ին կնքված՝ N WVA/CC/04/12 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 130 ուսուցիչների վերապատրաստում՝ 9160500 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ